

ունէին արմաւենիս, այլքն ձիթենիս եւ զայլ  
 ծաղիկս եւ ժժմունս, զոր յառաջն պաշտէին  
 դեռ եւս կոսապաշտիցն մնացեալք: Եւ կայր  
 երկու սիւն մեծ մարմարէ, որպէս Ստամպո-  
 120 լայ Արվատս պագարին. միոյն վրայ սուրբն  
 Պետրոս բանալին ի ձեռն, եւ միւսն սուրբն  
 Պօղոս ազնիւ սփետրէ սսկէջրած, հեռու ի  
 միմիանց. մինն ի մէկ դուռն պարսպին, եւ  
 միւսն ի միւսն, որ հեռաստանէ փայլ զփայլի  
 125 ասյին:

Եւ Հայոց եկեղեցոյ անունն Սանթա Մա-  
 րիայ էրչիցքա, որ է Մարիամ Եգիպտացի:

Եւ օր մի անցաք ի այն կոյս գետոյն միւս  
 կողմն, զի այս ամենայն զոր գրեցաք՝ կէս  
 130 քաղաքն էր: Եւ տեսաք եկեղեցի մի զարմա-  
 նաչէն Յիցիլայ անուն, որ է Կիկիլիայ կոյան,  
 յոյժ փարթամ եւ հարուստ ժամ. քառսուն  
 մեծ կանթեղ համրեցաք արծաթիս. եւ երե-  
 սուն շամտան եւ ամէն շամտանի ներքեւ մին  
 135 մին արծաթի սկուտեղ. եւ ի գետնափոր յայրն  
 մարմին էր սրբոհոյ կուսին, ներքեւ սեղա-  
 նին, սաֆի սօմախի մարմարով զուգած որ  
 կարծէր մարդ թէ փայլուն հայելի էր: Եւ այլ  
 բազում շէնս եւ նկարս տեսաք, զոր ոչ արկաք  
 140 ընդ գրող վասն չձանձրանալոյ կարդացողաց  
 եւ լսողաց: Եւ անտի զնացաք ի վանքն ուր  
 զՊետրոս խաչեցին, որ էր մեծ եւ փառաւոր  
 եկեղեցի ի բարձրաւանդակ տեղով. եւ անտի  
 ամենայն քաղաքն որպէս ինծոր կ'երեւէր: Եւ